

## ԲԵՅԱՑԻՆԵՐԸ ԿԱՄ ԲԱԲԻՁՄ<sup>1)</sup>

Պատմական տեսութիւն

8. Բարի քարոզութիւնները դաւանող և հետեւղները խոս-  
տովանում էին, թէ Միրզա-Սէյիդ Ալի-Մէհմէդը ինքը Մէհթին էր,  
որին սպասում էին պարսիկները, այն ինչ իսնաաշարի-միւթէ-  
շարիների դաւանութեան համաձայն, Մէհթին չպէտքէ ո-  
րևէ կնոջից ծնէր, այլ որպէս «գերբնական կատարելութիւն»  
պիտի վերադառնար երկիր: Հետեւարար Բարը իւր քարոզու-  
թիւնով ոչ միայն հակասում էր շիաների հաղիաներին, ոչ մի-  
այն աւանդութիւններն էր եղծում, այլ դաւանանքը, հաւատի  
էական մասն էր հերքում, այնպէս որ մի ահաւոր սպառնալիք  
էր այդ քայլը, որ կարող էր իսպառ ջնջել շիական կրօնը:  
Ամբողջ Շիրազի ազգաբնակութիւնը ճանաչում էր Աղա Մէհթ-  
Ռզա վաճառականի որդուն, որքին, ամենքը տեսել էին նրա ծը-  
նունդը, հետեւարար ամբողջ տասը դար Հաբուլգայից Մէհթիի  
վերադարձին սպասող շիաները ինչպէս կարող էին զիջել  
և դաւանել, թէ այս երեխայից մեծացած Բարը նոյն ինքը  
Մէհթին է: Դրութիւնը այնտեղ հասաւ, որ հարկ եղաւ կառա-  
վարութեան խիստ միջամտութեան, որը մինչ այդ տատանւում  
էր: Կառավարութիւնը դանդաղելու էլ իրաւոնք ունէր, քանի  
որ Մէհթիի վարդապետութիւնն իր գոյութեան հակառակ ներ-  
շնչումներ էր տարածում ժողովրդի ամեն դասում, որոնք հա-  
ւատացած էին. թէ Մէհթիի վերադարձը պիտի ջնչէ ոչ միայն  
պարսկական, այլ ամբողջ հողագնդի թագաւորութիւնները:  
Շէյխ-Ահմէդ-Բահրէինի Արարացիի քարոզութիւնները և վարդա-  
պետութիւնը բոլորովին տարբեր հիմունք ունենալով իսնա-  
աշարի—միւթէ շարիների դաւանանքից, բաւական խախտել  
էր շիաների դաւանանքը՝ Մէհթիի մեծագօր գալստեան մասին,  
որով ամրապնդել էր արքունական տան դրութիւնը: Կառավա-  
րութիւնը չէր կարող իրեն նպաստաւոր վարդապետութեան

աշակերտողներին հալածել, քանի որ Շէյխ-Ահմէդի, Հաջի Սէիդ-Քեազիմի բոլոր նշանաւոր աշակերտները շրջապատել էին Շէիդ-Ալի-Մէհմէդին՝ Բարին, իսկ սրանք իրենց վարդապետութեամբ արդէն տիրել էին Պարսկաստանի շիա հասարակութեան կէսից աւելի մասը։ Շէյխ-Ահմէդի վարդապետութեան համաձայն, ինչպէս Աստուած երբէք չի կարող մարմնանալ, նոյնպէս որևէ մարմին չի կարող աստուածանալ, այլ աստուածային ողին անդրառնալով որևէ մաքուր մարդկային սրտում, նրան կներշնչէ Աստուածոյ բանը—Երկնաւորի պատուիրանը խօսելու մարդկային ցեղին։ Մինչև անգամ նա պնդում էր, որ աշխարհիս վերջին էլ մարդկային մեռած, փթած դիակները չը պիտի կենդանանան, չը պիտի վերստանան իրենց հոգիները, այլ այդ հոգիները պիտի նոր-թարմ մարմին հագնեն, ինչպէս ծիրանի կորզից աճած ու հասած ծառը տալիս է, արտադրում է ճիշտ իւր նման ծիրան, տանձի սերմից աճած ծառը տանձ է տալիս, նոյնպէս նոյն հողի՝ մէջ փթած մարմինները պիտի իրենց համանմանները ծնեցնեն, որոնք իրենց հոգիներով պիտի վերակենդանանան։ Այս վարդապետութիւնը աւելի աղաւաղեց Հաջի Քէրիմ—իւան Ղաջարը, որը քարոզում էր, թէ իւր կուրծքը բնակարան է Մէհթիի հոգու և պատգամներ էր տալիս։ Բայց աստուածութեան բանը խօսելու յաւակնող այդ արքայագնը, քաջութիւն չունեցաւ պաշտպանելու իւր հրատարակութիւնները, երբ արքայական տանից արիւնակիցները քննութիւն բացին, նրան պատասխանատուութեան ենթարկեցին։

9. Շէյխի վարդապետութիւնը անշափ նպաստեց Բարի վարդապետութեան տարածման, իսկ շէյխի աղանդաւորների տասնեռութ նշանաւոր կղերականների Բարին յարիլը, բոլորովին հաստատեց Բարիական աղանդը Պարսկաստանում։ Այս տասնեռութ աշակերտները իրենց քարոզութիւնների մէջ ամեն տեղ մատնանիշ էին անում Շէյխ—ահմէդի և Մէիդ—Քեազիմի այն գրուածները, այն քարոզութիւնները, որոնք ակնարկում էին Բարի գալուստը, սրա յայտնութիւնը և այս քարոզութիւններով, այս տասնեռութ աշակերտների ձեռքով իրանի ամեն կողմէ կատարուած պրօպագանդան տարաւ յաղթանակը, Բաբիզմը բռն դրեց Պարսկաստանի նշանաւոր քաղաքներում, աւաններում, նոյն իսկ գիւղերում։ Այս տասնեռութը ուլէմների տուածդաւանութիւնը, կատարած քարոզութիւնը այնպիսի ոգևորութիւն ներշնչեց Մէիդ—Ալի—Մէհմէդի վրայ, որ սա—Բաբը իր անունն էլ աւելացնելով—կցելով նրանց թուին, հրաշագործ տասներինը թիւը կազմեց, տարին բաժանեց տասներինը ամսի,

ամիսը տասնեխննը օրուան։ Այս տասն և իննը անձերը համարուեցան նոր կրօնի սիւները և Բաբիական շատ թռեր տասն և իննի վերածուեցան։ Հարկը 19-րդ բաժին է հաւաքուելու, տուրքերը 19-րդ մասն է գանձուելու, ժառանգութեան տասնեխներորդը պիտի տրուի հասարակական գանձարանին, քաղաքական, արդարութեան ժողովի անդամները 19-ից է բաղկանալու, ևայն, ևայն։

Բիշրօյէցի Մօլլա Հիւսէյն Միւջթէհիդը երբ Թէրէլայից բաժանուեց իւր ընկերակիցներից, իրենց հանգուցեալ վարժապետին՝ Սէիդ Թեազիմին մի արժանաւոր յաջորդ գոնելու յոյսով, նա որոշեց ուղղակի Շիրազ գալ և իջնել իւր ծանօթ Սէիդ-Ալի-Մէհմէդի տունը, տասը-քսան օր հանգատանալ, կազդուրուել։ Սէիդ-Ալի-Մէհմէդը մեծ յարգանքով ընդունեց բարեկամին և շատ սիրալիր անցկացրին։ Դիշերը երկար խօսակցութիւնից յետոյ, տան տէր երիտասարդը հարցրեց Բիշրօյէցիից, թէ—«արդեօք պարագլխին վայել արժանաւորութիւնները ինքը չէ իւրացրած, ինքը արժանի չէ այդ կոչման»։ Բիշրօյէցին ժպտալով ասաց.—«Երբէք, Ուզիդ է վարքով, բարքով, խելով գուք շատ արժանաւորութիւն ունիք, բայց Սէիդ—Թեազիմին յաջորդելու համար անհրաժեշտ է բարձր գիտութիւն ունենալ, անսահման մտաւոր հայեացք, հրետորական ձիրք, բնատուր տաղանդ, որոնցից բարեկամն, դուք զուր էք»։ Այս խօսքերից չը-յուսահատուեց Սէիդ-Ալի-Մէհմէդը, բայց երիտասարդի յանդուգն երևակայութիւնը փոթորիկ բարձրացրեց Բիշրօյէցիի գանկում Մաքի ալէկոծման առաջն անելու նպատակով հիւրը սենեկակի թախճակից մի գիրք վերցրեց կարդալու, որի ճակատին գրուած էր «Բէզարա—Սուրիէի «մեկնութիւնը» (դորանի բ. գլխի), որը լարեց Բիշրօյէցիի հետաքրքրութիւնը։ Այդ արաբական գրուածքից մի քանի երես կարդալով, նրա թարմութեամբ բոլորովին յափշտակուեց հիւրը և հարցրեց, թէ—«վ է գրել այս «Մեկնութիւնը»—Մի յաւակնութիւն ունեցող երիտասարդ, պատասխանեց տանտէրը։ Բայց այնքան հմտութեամբ և այնպիսի ճարտար ոճով էր գրուած այդ «Մեկնութիւնը», որ Բիշրօյէցին տարակուսելով հիւրընկալի վրայ, նրան մեկնեց գիրքը և ասաց,—«Ես յոգնել եմ, խնդրում եմ դուք կարդաք, ես քիչ տարածուած լսեմ»։ Սէիդ-Ալի-Մէհմէդը կարդում էր դանդաղ և վատ առողջանութեամբ, որից հիւրը եղբակացրեց, թէ դա նրա գործը չէր կարող լինել։ Հետևեալ օրը Բիշրօյէցիին տարան մզկիթ քարողելու, ի բայց նա կարկամեց և յոգնածութիւնը պատրուակ բերելով տուն դարձաւ։ Երբորդ, չո-

բորդ օրերն էլ չըկարողացաւ քարոզել, այնպէս որ նրա մըտքում գամուած էր հիւրընկալի առաջարկը, կարդում էր նրա գրած «մեկնութիւնը» և մտածում: Այդ գիշեր նորից կրկնեց տանտէրը իւր հարցը, թէ «—արդեօք ինքը արժանի չէ՞ Սէիդ-Քեազիմին յաջորդելու»: Այս անգամ Բիշրոյէցին մի խրատական խօսեց, երիտասարդին մոլորութիւնից ազատելու և իր միտքն էլ խաղաղցնելու դիտմամբ՝ նրան մի քանի շատ խրթին հարցեր տուեց: Երբ Բիշրոյէցին հարցերի դէմ տանտէր երիտասարդը սկսեց արաբական ընտիր ոճով ինքնարուղին այաթներ կարդալ, բացատրել իրեն տրուած հարցերը, Բիշրոյէցին շուտարեց: Այս անգամ Սէիդ-Ալի-Մէհմէդին բոլորովին ընկճելու համար հարցընց, թէ—ի՞նչ է պատճառը, որ զուրանի ժամկէփ-Սուրէին» համարում է պատմութիւնների սքանչելիքը: Սէիդ-Ալի-Մէհմէդը պատասխանեց, թէ—«յդ հարցը տուել էիք Սէիդ-Քէազիմին, նա պատասխանել էր, թէ դրա ժամանակը դեռ չէ հասել Խոկ ես ասում եմ, ահա այսօր լրացաւ այդ ժամանակը և իրար ետևից երեք չորս հարիւր այաթով արաբերէն լեզուով մի ճառ արտասանեց, որից Բիշրոյէցին մոլորուած արձանացած մնաց: Տանտէրը թողեց հիւրին հանգստանալու, մտաւ կանանցը, որտեղից մի-երկու ժամ յետոյ վերադաշտ Բիշրոյէցիի մօտ, նրա համար մի բաժակ թէյ բերեց, առաջարկեց և սթափեցրեց միւլթէհիդին խորասուզուած մտքերից: Այս սթափումից յետոյ խոստովանեց հիւրը, թէ ճշմարիտ որ Սէիդ-Ալի-Մէհմէդը աստուածայայտնութիւն է, որի առաջին դաւանողը, ամենայայտնի քարոզիչը և մարտնչողը՝ դարձաւ, որի համար էլ նրան կանչեցին Բար-էլ-բար (Դուան-դուռը):

10. Շիրազի կառավարչազապետ՝ Սահարի իխթիարը նորաղանդներին սանձելու համար, Բարի հետեւրդներից նշանաւորներին կալանաւորեց, մօրուքները կարել տուեց, ապարօշները բացեց, երեսները մրուտեց, էշերի վրայ նստացնելով պոչերը ձեռքերը տուած ման ածեց քաղաքի փողոցները, Շիրազի թաղերը, մունետիկների միջոցով խայտառակեց և սպառնաց քաղաքիներին նոյն խայտառակութեամբ պատժել, ով որ յանդնի հետեւելու աղանդաւորներին: Բայց այս հալածանքը աւելի բորբոքեց Բարի հետեւրդներին, որոնք աւելի գրգռուած էլ համարձակ քարոզեցին Սէիդ-Ալի-Մէհմէդի վարդապետութիւնը: Խսֆահանի կառավարչազապետ՝ Մութէմէդ-Դովլէէն Մանուչէհը խանը, որ ազգով վրացի էր և փոքր հասակից գերուած, ներքինիացած ծառայում էր արքունիքում, իւր մօտ հրաւիրեց Բարին Շիրազից, որը երկար հակածառութիւն ունեցաւ Խո-

Փահանի միւջթէհիդների հետ, բայց որևէ եղբակացութեան չը-  
հասան: Մանուշէհ-խանի մահից յետոյ, սրա եղբօրորդին՝  
Դէորդին-խանը յաջորդելով, մեծ-վէզիրի հրամանի համաձայն  
կալանաւորեց Սէիդ-Ալի-Մէհմէդին և ուղղակի ճանապարհեց  
Թաւրիդ: Կենդրոնական վարչութեան կարգադրութեան համա-  
ձայն, Թաւրիդից էլ մի քանի օր յետոյ ուղարկեցին Մաքու,  
ուր բանտարկուած մնաց բերդում երկար ժամանակ, Մաքուի  
իշխան Ալի խանի մօտ, որից անչափ յարգուած էր: Պարսից  
կառավարութիւնը կալանաւորեց Բարին, բայց չկարողացաւ  
շղթայել, կապկաբել նրա քարոզութիւնը, որը հսկայական քայ-  
լերով մտնում էր Պարսկաստանի նշանաւոր քաղաքները, ա-  
ւանները, ժողովուրդը, պաշտօնականները, զօրքը, մինչև ան-  
դամ կղերը խոնարհում և հսկատակում էին այն կալանաւորին,  
որը Մասիսի լանջերից աչքերը յառած դէպի արևելք, այդ ժո-  
ղովրդի վիճակով էր տոչորում և զրիչը սրտի արիւնի մէջ  
թաթախելով, նրանց յորդոր էր գրում սթափուելու իրենց  
դարնոր լետարգիական քնից: Բարի քարոզութեան երրորդ տա-  
րին, երբ նրան տարած Մաքուի բերդը, արդէն Եզդ, Քիրման,  
Խսփահան, Թէրան, Ռէշտ, Մազանդարան, Ղազուին, Զէնջան,  
Թաւրիդ ահաւոր հետեղներ ունէր Բարիկականութիւնը, այն էլ  
երկրի հասկացող դասից, նշանաւոր կղերից և Սէիդ-Ալի-Մէհմէդի  
նամակները, բրօշիւնները, գրեերը նրա աշակերտները անխա-  
փան Մաքուից տանում էին, տարածում էին իրանի ամեն կող-  
մը. ամեն տեղ արտագրում և սփուռում էին ժողովրդի բոլոր  
խաւերում: Շատ կարծ ժամանակամիջոց քարոզեց Բարը, եօթը  
տարի, որից չորս տարին բանտարկուած էր և այդ եօթը տա-  
րուան ընթացքում անչափ գրուածներ թողեց, որոնցից նշա-  
նաւորներն են, 1. Բէյանը Արաբի (մեկնութիւն-սուրիէի-քէզա-  
րա), նոյնը Ֆարսի, 2. Ահսան էլ Գոսա (պատմութիւնների  
պքանչելիքը), 3. Թափսիրի սիւրիէի Քէ Փսէր (Քէփսէրի բա-  
ցատրութիւնը), 4. Դելախիլ. Սէրէա (եօթը փաստեր), 5. նա-  
մակներ Հաջի-Սիրզա-Աղասի մեծ վէզիրին և ուրիշներին, 6.  
Ղայում-էլ-խմէչա (անունների հաստատութիւնը), 7. Միւթէֆէ-  
րի քա (այլ և այլք), 8. Նուբուվէթի-խասսէ (խսկական-մարգա-  
րէութիւն), 9. Թափսիրի Սիւրիէի-վկալի-էս (բացատրու-  
թիւն) և ուրիշները: Այս գրուածներից մեծ մասը նա Մաքուի  
բերդում շարադրեց և տարածեց: Այս գրուածները ձեռ-  
քէ ձեռք խլում, ընդօրինակում, տարածում էին և ամեն  
մի պարսիկ իրեն մեծ փառք էր համարում, եթէ  
կարողանում էր այս նոր մարգարէի գրուածներից մի

քանի տող ձեռք բերել, կամ գոնէ պատճէնը գտնել: Ամբողջ Պարսկաստանի քաղաքներում և աւաններում գաղտագողի հաւաքում էին ներքնատներում (չէրչէմի), մեծ հրճուանքով կարդում, բացատրում էին այդ գրուածները և անհասկանալի կտսերի մասին նորանոր մեկնութիւններ էին խնդրում Սէիդ Ալի-Մէհմէդից, որ ամենայն սիրով բոլոր հարցերին պատասխանում և շրջաբերականներով տարածում էր հետեւղների—սիրելիների շրջանում: Բարը կալանաւորուած էր, բայց նրա գրիչը քարոզում էր ամբողջ երկրում: Որքան խստացնում էին հսկողութիւնը, այնքան շատ սաստկանում էր թղթակցութիւնը:

11. Խնչպէս յայտնի է, Խոլամի հետեւղների աշխարհահայեացքով որևէ կրօնական բէֆորմ, պետական—քաղաքական վերանորոգութիւն նշանակութիւն ունի, քանի որ Խոլամի վարդապետարանը—Ղուրանը և հաղիսները միւսուլմանների համար մի կրօնաքաղաքական—կանոնական և օրէնսդրական կողէքս է, մի սահմանադրութիւն է Ալլահից նախասահմանուած ժողովրդի իրար մէջ, համայնքի, կղերի և առաջնորդի մէջ, ընտանեկան, հասարակական, դատաստանական, քրէական, անհատական և առևարական բոլոր գործողութիւնների համար: Հետեւաբար Իրանի բնակիչները այն յոյն էին տածում, թէ Բարի նոր—կողէքսը պիտի հիմնիվեր տապալէր շիաների շէրիաթը և պիտի հիմնէր մի նորագոյն օրէնսդրութիւն՝ ժամանակի ոգու և կարիքների համեմատ: Բարը ասում էր, թէ—«Ի՞նքն է այն դուռը (Բար՝ որից խօսում է ամէնսագէտը, Ամենակալը, և երկնային պատուէրները մարդիկներին տրւում է այդ դռնից»: Առաջ նա ասում էր, թէ ինքն է Հարուլդա հեռացածի դուռը, որից նա ստանում է պատգամները: ապա նա քարոզեց, թէ նա ինքն է Հարուլդայից սպասուածը և ապա, թէ Հարուլդան առասպել է, իսկ իր մէջ է բնակլում այն գերագոյն հոգին, որ քարոզում է ճշմարտութիւնը և աւետում է աշխարհին շուտով գալիք աստուածայայտնութիւնը: Այս պատճառով կղերը—շիա միւջթէհիղները կասկածում էին, թէ կարող էին իրենց դիրքը կորցնել կառավարութիւնը մտածում էր շփոթութիւնների առաջն առնել, երիտասարդ բէֆորմիստները տենչում էին Բարիականների ոյժից օգտուել, երկրում վերանորոգութիւն մտցնել, զրկուած կեղերուած, անարգուածները ջանում էին կործանել հին կարգերը, դրանց պահպանողներին ու գործադրողներին, երկրագործը երևակայում էր օձիքն ազատել անկուշտ խաներից—կալուածատէրերից, ուստի բոլոր դժգոհ-

ները, բողոքողները ամէն տեղ շրջապատում էին Բարի աշակերտներին, և երազում էին երկրից անիրաւութիւնը վերցնել, համաձայն քարոզչի, նոր մարդարէի խոստացած աւետիսներին:

12. Բիշրօյէցին, երբ լսեց Բարի Մաքու աքսորուելը և բանտարկուելը, նա գնաց Մաքու իւր պաշտելի վարդապետին այցելելու: Վերադարձին թէս Բարը նրան յայտնեց իրան պատահելիք փորձանբները, արինչեղութիւնները և սպանուելը, բայց Բիշրօյէցին անսերկիւդ՝ ընկերակիցների հետ դիմեց Խորասան: Ճանապարհին երբ լսեցին Մէհմէդ շահի մահը, վտանգից զերծ մնալու համար մտածեցին մի առժամանակ մնալ Մազանդարան, մինչև նոր շահի Թաւրիկից Թէհրան համնելը, գահ բարձրանալը, երկրում կարգերի վերահաստատուելը և խաղաղուելը: Երբ ուզեցին Սարի քաղաքը մտնել, այնտեղի միջթէիդ՝ Սայիդ-իւլ-իւլէման, որ թէ Բիշրօյէցիի և թէ Մոլլա Գուգգուսի մեծ հակառակորդն էր, հրաման ուղարկեց, որ այդ քեաֆիր (հայհոյող) Բարիները չհամարձակուին ապականել իրենց քաղաքը: Քաղաքի դռներում սրանց գնդակներով հալածելիս, Բարի վարդապետութեան համար առաջին անգամ երեք զոհ ընկաւ Սարիի պարիսպների տակ, որի պատճառով սուր բարձրացրին Բիշրօյէցին և ընկերները պաշտպանուելու համար և բռնութեամբ քաղաք մտան, Սաբզա մէյդանի վրայ մի քարվանսարայում ապաստաննեցան: Քարվանսարայի կտրից ազան կարգացող երեք Բարիներին իրար ետևից գարձեալ գնդակահար արին Սարիցիները, այնպէս որ Բարիները պարտաւորուած ամրացրին քարվանսարայի դռները, պաշտպանուեցան, որոնց պաշարեցին Սայիդ-իւլ-իւլէմի հետևորդները: Հինգ—վեց օր տևեց կոփւը, երկու կողմից էլ զոհեր ընկան, երբ կառավարչական պաշտօնակաները միջամտեցան և ձգտում էին խաղաղացնել, միանդամայն կողոպտել Բարիներին, Բիշրօյէցին զարկեց սպանեց կառավարութեան ներկայացուցչին, քաղաքում և շրջակայքում ունեցած կրօնակիցների աջակցութեամբ, մօտ 360 հոգի, գուրս եկան Սարիից, գնացին մօտակայ Շեյխ-թէքէրսի աւերակ բերդը մտան, նորոգեցին, ամրացան և ամբողջ ինն ամիս կոռուցան պարսկական բանակների դէմ:

13. Ամբողջ գիւղական ազգաբնակութիւնը, նախապաշարուած դասը անցաւ Բիշրօյէցիի կողմը, ամենքը ընդունեցին Բարի վարդապետութիւնը և ամեն մարդ իւր կարողութեան չափով օգնում էր, թէ բերդի շինութեան, նորոգութեան, ա-

տաղձով, մթերքով, պաշարով, դէնքով, այնպէս որ կառավարութիւնը պարտաւորուած ահաւոր բանակ ուղարկեց Բաբիների դէմ: Յաճախ կողմերը իրար դէմ յարձակում, արիւնահեղ կոտորածներ էին անում, Բաբիները դուրս գալով բերդից կոտորում էին հակառակորդներին, ցըռում նրանց ոյժը, կրակ տալիս զօրանոցներին, մթերանոցներին: Այսքան ծանրացաւ դորքի ու շիաների վիճակը, որ Սայիդ-իւլ-իւլէման Զհադ (կրօնական պատերազմ) հրատարակեց: Բայց զնւր, քանի որ պարսիկները երբ տեսնում էին Բաբիների հերոսական կրիւր, մի բուռը մարդիկների այսպիսի աներկիւղ դիմադրութիւնը, իրենց ծանօթների և հարազատների մարմիններից անջատուած և ցիցերի վրայ բարձրացրած գլուխները, որոնք տնկած էին Թէրէրսի բերդի շուրջը, յուսահատ վերադառնում էին իրենց բնակարանները: Այս յարձակումների ժամանակ Բաբիները մըտան Բարփրուշ, աւերեցին, այրեցին Շահզադէի ապարանքը, որի բոցերի մէջ խանձուեցին շահզադէխները: Կառավարութիւնը անճարացած օրից օր աւելացնում էր գորքի և թնդանօթների թիւր, որոնք գիշեր-ցերեկ տընում էին տապալել Թէրերսի բերդը և Բաբիներին: Որպէսզի գիշերները հնարաւոր լինի գործելու, զօրքերը կրակ էին տալիս շրջակայ անտառներին, որոնց լուսովյարձակուում թշնամիների վրայ: Մի գիշեր Աքբաս-Ղուլի խանը՝ Մազանդարամի զօրքերի հրամանակալը կարողացաւ գնդակահար տապալել Մոլլա Հիւսէյն Բիշրօյէցիին, որին յաջորդեց Մոլլա Դուդդուսը: Բիշրօյէցիին թաղեցին Շէյխ-Թէրէրսի բերդում, բայց յետոյ պարսիկները նրա դիակը հանեցին, մասրեցին և թափեցին շներին:

14. Պարսիկները 7000 զօրքով, թնդանօթներով և ձիւրուներով պաշարել էին Թէրէրսի բերդը, իսկ Բաբիները թէւ անզէն, առանց մթերքի, քաղցած, խոնաւութիւնից թուլացած դարձեալ հերոսարար դիմադրում էին մինչ այն աստիճան, որ Շահզադա Մէքթի-Ղուլի-Միրզան ընկճուած, զիջաւ դաշնակցելու Բաբիների հետ և պայմանաւորուեց նրանց ազատ թողնելու, անցնել Պարսկաստանի միջով, գնալ Բաղդադ: Դաշնագիրը գրեցին: Ղուրանով երդուեցին պարսիկները, յանձնեցին Գուղգուսին: Բաբիները անձնատուր եղան, երբ զէնքը, մթերքը յանձնեցին, երբ պատրաստում էին ճանապարհ ընկնելու, երբ նստած սեղանի ընթրում էին անզէն ընկճուածները, շիաները - զօրքերը վրայ պըծան, գնդակահար արին բոլորին: Անձնատուր եղած 350 մարդուց միայն 16 հոգի կարողացան ազատուել, որոնք պատերազմի մանրաւումներ

մասնութիւնները տարածեցին ամբողջ Պարսկաստանում։ Շահ-զադա կառավարչապետը մոլլա Գուդղուսին հազար թումանով ծախսեց նրա հակառակորդ մօլլա Սայիդ-իւլ-իւլէմային, որը չարչաչար տանջանքով կտրտել տուեց Գուգդուսին իւր թալարաների ձեռքով և մարմինը թափեցին շների առաջ, 1849 թուականի աշխանը։

15. Սէիդ-Միրզա Եահեա Դարաբին, Բարի վարդապետութիւնը ընդունելուց յետոյ, խիստ հալածանքի ենթարկուեց, իսֆանից, Եղիղից, Շիրազից ամեն տեղից նա պատրաստուած էր իոյս տալու, այնպէս որ նա մի խուլ անկիւն քաշուեց՝ Նէյրիզ քաղաքը, իւր ընտանիքի մօտ։ Ուր որ գնում էր Եահեան, նրա վրայ յարձակում էին շիա կղերը, որպէս ուրացողի՝ հալածում էին, տանջում էին առանց միջոցների մէջ խորութիւն դնելու, նոյն իսկ ձգտում էին նրան սպանել, գոյութիւնը ջնջել աշխարհի երեսից։ Հալածուածը կրկնում էր ամեն տեղ.—«Զէ որ ես այն միւջթէհիդն եմ, որին ամբողջ Իրանը երկրպագում էր, հրամանները գործադրում, ի՞նչի այժմ ինձ այսպէս հալածում էք, մինչև անդամ չէք թողնում, որ ընտանիքիս մօտ քիչ ժամանակ էլ է խաղաղեա»։ Սէիդ Եահեան Նէյրիզում բաւական հիտեողներ ունէր, այնպէս որ ոչ բնիկ հակառակորդները, ոչ կղերը, ոչ էլ կառավարչական գործակալները չէին յանդգնում նրա վրայ ձեռք բարձրացնելու իսկ ատելութիւնը օրից օր սաստկանում էր, կենտրոնական վարչութիւնը Մազանդարանի արկածներից սարսափած, ուղում էր Բարիկալաններին ամեն տեղ բնաջինջ անել։ Իրը խովութիւններին վերջ տալու նպատակով, երկրի կառավարիչը հրաւէր սարքեց, կանչեց տեղական միւջթէհիդներին, իւլէմներին և Սէիդ-Եահեաին, որ բացատրուեն, պարզեն խնդիրը, վերջ տանքինախնդրութեան և վէճերին։ Երբ Սէիդ-Եահեան առանձնացաւ, կառավարիչը նրան կալանաւորեց, Բարիները երբ լսեցին, թէ իրենց առաջնորդը կառավարչի բնակարանում արգելուած է, իսկոյն շրջապատեցին այդ տունը և ձգտում էին հանել տանել Եահեաին։ Ամրութի աղմուկից և նրանց բազմութիւնից սուկալու կառավարիչը, երդումով խոստացաւ արձակել բոլոր, այնպէս որ Եահեան պարտաւորուեց իւրայիններին հրամայել՝ յըռուել, վերալառնալ բնակարանները։ Այս նենգութիւնով ժողովրդին յըռուելուց յետոյ, Եահեաին գնդակահար արին և գիշերով մէկ մէկ մտան աղանդաւորների տները, գլխաւորներին կալանաւորեցին, սպանեցին, կին, աղջիկ, տղայ գերեցին և աւարի տուին նրանց գոյքը, կարողութիւնը։ Այս բարբարո-

սական բռնութիւններից սարսափած Բարիները իրենց ընտանիքով, մանր ու խոշորով ապաստանեցան լեռները, անտառները և այրերը, որտեղերից ամբողջ երկու տարի քաջութեամբ կուռեցան պարսկական զինուորների և անկուշտ պաշտօնակալների հետ, որոնք կեղեքում, կողովում էին պատահածին և զուր զրպարտութիւններով տանջում էին նոյնիսկ ոչ Բարինեներին։ Պաշտօնականները և շիա-կղերը դուր մատնութիւններով, զրպարտութիւններով կեղեքում էին ամբողջ նահանգը և ողբացնում թշուառ ազգարնակութիւնը։

16. Կորին այնտեղ հասաւ, որ կառավարութիւնը տասը հազար զօրք ուղարկեց, թնդանօթներով և հեծելազօրքով, որոնք ամբակոծում էին ապառաժները, այրերն ու անտառները. Յուսահատութիւնից բորբոքուած Բարիները անվերջ իջնում էին լեռներից, հարուածում, կոտորում, ցրում էին զինուորական գնդերը, սրանց վառոդը, գէնգերը, ուստելիքը յափշտակելով՝ վերադառնում էին իրենց ապաստանները։ Մինչև անգամ պարսիկ զինուորների ձեռքից թնդանօթները խլեցին, լեռները տարան Բարիները և դրանցով հալածեցին զօրքին։ Կոռուղ բարիների թիւը թէև հօթը-ութը հարիւրից աւելի չէր, բայց նրանց սարսափը դողացնում էր բանակի սպարապետ Շահզադա Ֆէրման Ֆէրմային—որը չէր իմանում, թէ ի՞նչ հնարքով խարի ապստամբներին և նրանց ջնջէ։ Բայց և այնպէս քաղցը, ցուրտը, մթերքի պակասութիւնը, կանանց, երեխանների տանջանքը, երկու տարուան անվերջ յոզնածութիւնը, զղերի գըրգումները թուլացրին և ստիպեցին Բարիներին զիջանելու, հաւատալու պարսիկ զօրականին, անձնատուր լինելու իրենց դահիճներին։ Հրամանատարը Բարիների գլխաւորներին կոտորել տուեց, նշանաւորներին ուղարկեց ֆարսիստանի զանազան քաղաքները և աւանները խայտառակութեամբ տանջելու և սպանելու, երեխաններին, կանանց և աղջիկներին գերի վարեցին Շիրազ զարհուրելի տեսարաններով։ Զօրքերը իրենց նիզակների ծայրերին ցցած տանօւմ էին քաջ Բարիների գումիները, կամ նրանց բալուրով երեխանները։ Բարիների դեսահաս աղջիկներն ու կանայք հրապարակով պիտի յագեցում տային իրենց թշնամիների լպերը կըբերին...։ Դեռ մինչև այսօր ֆարսիստանի բնիկները սարսափում են, երբ նկարագրում է նըրքանց Բարիների կեանքից որևէ արկած, դեռ մինչ այսօր Շիրազի բնիկների ականջներից չէ հեռացել այն ողբի, կոծի ձայնը, որոնք բաղխուել են նրանց ականջներին կէս դար առաջ։ Ամբողջ տասը—քսան տարի ամեն մի պարսիկ պաշտօ-

նականի, մոլլաի, թալաբայի համար անսպառ աղքիւը էր Բարիներին մատնելու և կեղեգելու արհեստը։ Ամէն մի սոված, ամէն մի վրէժինդիր թշուառացնուալ էր հակառակորդին նրան Բարի հրատարակելով և ագահ կառավարիչները իրենց անհեռատես ընթացքով բայցայիցին երկիրը։

Եւ որքմն հետամտում էին, որքմն տանջում էին, այնքան բաղմանում էին Բարիները։

17. Բարի անձնուէր բարողիչներից և տասնութը աշակերտողներից մէկն էլ Զէնջանցի Մօլա-Մէհմէդ-Ալի միւջթէ-հիդն էր, որին անուանուվ են Հէօջաթի։ Մրահայրը Շէյխ-Ահմէդ-Բահրէինիի աշակերտներից էր, իսկ ինքը Սէկդ-Թէազիմի և ապա եռանդով մարտնչող Բարիզմի։ Հայրու որդի մեծահամբաւ տանից էին, ահաւոր հետեղներ ունէին իրենց ծննդավայրում և վիճակում, այնպէս որ Հէօջաթը շատ կարճ միջոցում տարածեց նոր վարդապետութիւնը Զէնջանում։ Շէյխի ժողովուրդը այնպէս կապուեց Բարի եկեղեցու հետ, Հէօջաթի թալաբաները (ուսանող) այնպէս իւրացրին նոր վարդապետութիւնը, որ աներկիւղ ամէն տեղ Սէիդ Ալի-Մէհմէդին բարողում էին Մէհմի և դրացիներին հրաւէր էին կարդում յառել իրենց դաւանանքին։ Որովհետեւ քաղաքի ժողովրդի հասկացող, ապահով դասակարգը Հէօջաթին էր յառած, միւս կղերը նախանձեց անվերջ բողոքներ էին ուղարկում արքունիք, պահանջում էին սանձել նորադանդներին։ Երկու անգամ Հէօջաթը Թէհրան կանչուեցաւ, որտեղ նա աներկիւղ պաշտպանեց իւր դաւանանքը և վերջին անգամ բանտից փախաւ ծննդավայրը, Մէհմէդ-Շահի մեռնելուց յետոյ, երբ ժառանգը դեռ չէր հասել մայրաքաղաք։ Բայց Մազանդարանի, Նեյրիզի կոիւների պատճառով տարբեր ընթացք ստացաւ Բարիների հալածանքը։ Մինչ այս Բարի քարոզութիւնը Շէյխի շարունակութիւնը կամ մի նոր աղանդի յաւելումը համարելով, կառավարութիւնը այնքան էլ նշանակութիւն չէր տալիս, բայց երբ նկատուեց, որ աղանդաւորները հիմնովին ուղում են փոփոխել երկրի կազմը, կարգերը, որոնց աջակցում էին «Թանգիւաթի» երազողները, կենտրոնական վարչութիւնը՝ տակտիկան հիմնովին փոխեց։

### ԱՏՂՊԵՏ

(Կըշաբունակուի)